

891.71
9 - 36

891.71
Գ-36

0027 JUL 2006
19 NOV 2010

Արքայի անձնագիր

ԱԳԵԼԻԱ ԻՇԽԱՆ

ՊԵՏՐՈՎԻՔԻ



Գլուխ եղանակ կողմ.

891.71
Գ-36

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԱՆ» Գրաֆիսկայի փող. 6.

1911

14.03.2013

10338

ԱԳԵՒՂՍ ԻՉԻԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մի նահանգում իշխում էր Ազեռս անունով
մի գոռող իշխան։ Թագաւորը նորան տուել էր
լիազօր իշխանութիւն նահանգի բոլոր ժողովրդի
այ. թշնամիները նորանից սարսափում էին,
իսկ բարեկամների հետ չէր ել խօսում։ Նորա
ժողովուրդը խաղաղ ապրում էր, իմանալով իւր
կառավարչի փառքը։ Եւ հպարտացաւ իշխանը,
և սկսեց կարծել, որ աշխարհում իրենից զօրեղ
և իմաստուն մարդ չկայ։ Ապրում էր նա ճոխ
ու փարթամ. անհամար էր նորա հարստութիւնը,
անթիւ էին ծառաները, որոնց հետ նա երբէք
չէր խօսում, — անարժան էր համարում։ Իւր կնոջ
հետ նա լաւ էր ապրում, բայց նորան էլ խիստ
էր պահում, այնպէս որ նա չէր համարձակվում
ինքը խօսել, այլ սպասում էր մինչև որ մարդը
մի բան հարցնէ կամ ասէ։

Այսպէս ապրում էր Ագևոսը, ամենքից հեռու,
իւր ձոխ պալատում՝ կարծես միշտ կանգնած
լինէր մի բարձր աշտարակի դիմին, իսկ ցածր,
ներքեում մարդիկ լինէին կանգնած:

Մի տօն օր գնաց Ագևոսը եկեղեցի: Նա
գնաց իւր կնոջ հետ պերճ շորերով. ոսկեհուռ
թիկնոց, ականակուռ գօտի, իսկ նոցա գլխին բըռ-
նած տանում էին դիպակէ հովանի: Առաջից և
յետելից զինուորներ էին գնում սրերով ու սուսեր,
ներով և այդպէս հասցըին նոցա մինչև եկեղեցու
իրենց կանգնելու տեղը: Նոցա չորս կողմը կանգ-
նեցին կառավարիչներն ու պաշտօնեաները:
Լսում էր Ագևոսը պատարագը նիսքն իրեն մտա-
ծում՝ ճիշտ է ասած սուրբ Գրքումը, թէ ոչ:

Սկսեց տէր հայրը կտրդալ գիրքը և հասաւ
այնտեղը, որ ասում է. «Հարուստները կ'աղքա-
տանան և աղքատները կը հարստանան»: այս բա-
ռերը որ լսեց Ագևոսը, սաստիկ բարկացաւ և
գորգոռաց տէր-հօր վերայ:

— Այդ ի՞նչ կարդացիր դու, սեաւոր չես
տեսնում, որ այդ սուտ է. միթէ կարող եմ ես
աղքատանալ:

Տէր-հայրը ուշ չդարձրեց անգամ իշխանի
ասածին և դարձեալ շարունակեց կարդալ:

Ժամանացութիւնը վերջացաւ: Զայրացած
իշխանը հրամացեց տէր-հօրը շղթայով կապել ու
բանտը ձգել. իսկ այն թերթը, որի վրայ գրած
էին այդ բառերը, պատռել, ոչնչացնել տուեց:

Հրամանը իսկոյն կատարեցին՝ թերթը պատ-
ռեցին, խեղճին ձգեցին բանտը: Ագևոսը գնաց
իւր պալատը ուրախութիւն անելու:

* *

Մի օր մի պատանի քաղաքից դուրս՝ գաշ-
տում տեսնում է մի սիրուն, աննման եղջերու
և մածում է յայտնել իշխան Ագևոսին իւր տե-
սածը ու այդպէս նորա սիրու շահել: Վաղում
է քաղաք, գալիս է իշխանի պալատը և յայտնում
սպասաւորներին. լուրը համում է իշխանին, որ
և իսկոյն հրամայում է պատրաստութիւն տեսնել
որս գնալու:

Իշխանը որսորդների հետ միասին դուրս է
գալիս գաշտը՝ տեսնում է եղջերուին և ընկնում
ետեից. իսկ եղջերուն հանգիստ կանգնած մտիկ
է տալիս որսորդներին և կարծես մի բանի է

սպասում: Ագեստը իւր կեանքում երբէք չէր տեսած այդպիսի մի սիրուն եղջերու. զմայլուած իշխանը ընկնում է ետեից և զարմանում որ եղջերուն չէ հեռանում, փախչում, այլ կանգնած հանգիստ մտիկ է տալիս նորան իւր մեծ աչքերով՝ կարծես մի բան է կամենում տաել:

Իշխանը մօտենում է և կամենում է նիզակով տալ, եղջերուն շուռ է գալիս, թափ է տալիս իւր ճիւղաւոր եղջիւրները և փախչում. իշխանը ընկնում է նորա ետեից—բայց ձին յետ է մնում:

Մի փոքր անցնում է, յետ է նայում իշխանը և տեսնում, որ որսորդները շատ են յետ մնացել: Շուռ է գալիս կրկին և տեսնում, որ եղջերուն կամաց է գնում: «Այ, այժմ կը բռնեմ», — մտածում է ինքն իրան իշխանը և ձին քշում: Դարձեալ իշխանը բոլորովին մօտեցած կամենում է նիզակով տալ, բայց եղջերուն դարձեալ թափ է տալիս իրան և փախչում: Որսորդները փաղուց անհետացել էին և դաշտումը մնացել էին եղջերուն և իշխանը:

Ամբողջ կէս որ իշխանը ընկած էր եղջերուի

ետեից, բայց չէր կարողանում բռնել: Յանկարծ տեսնում է, որ եղջերուն դետի մօտ է գնում. «այ, այժմ կը բռնեմ», — ասում է ինքն իրան ու դարձեալ ձին քշում: Գետի մէջտեղը մի փոքրիկ կղզի կար փշերով ու խիտ ծառերով պատած. եղջերուն վագում է, գալիս հասնում ափը, իրան ջուրը ձգում, լող տալիս, գուրս է գալիս կղզին և ծառերի մէջ կորչում:

Ագեստը տեսնում է այս, ուրախանում է, մօտենում է ջրին, ձին քշում ջուրը: Բայց գետը խոր էր. մի քանի քայլ անում է ձին, ոտքերը կտրվում են գետնից, երեսում է միայն ձիան գլուխը. «այսպէս անցնելլ անկարելի է», — մտածում է իշխանը, ձին յետ է դարձնում, դուրս բերում ափը, կապում ծառիցը, շորերն էլ հանում է, ճիւղերից կախ անում և ինքը մտնում է ջուրը: Լող է տալիս, հասնում միւս ափը, դուրս գալիս ջրից և սկսում որոնել եղջերուին: Նայում է վերեից Աստուած և բարկանում Ագեստի վրայ, հրամայում է հրեշտակին, որ գնայ Ագեստի կերպարանքը ստանայ, հագնի նորա շորերը, նստի նորա ձին և գնայ քաղաք. և հրեշտակը կատարում է Տիրոջ պատուէրը:

իսկ Ազեռուը այդ ժամանակ որոնում էր եղջերուին. խեղճը շատ դէս ու դէն ընկաւ, բայց չիմացաւ, թէ ուր է փախել: Ուր կարող էր փախչել, մտածում էր ինքն իրան. տուաջը մեծ գետ է, ոչ մի գաղան չէ կարող անցնել գետը և վերջապէս կըտեսնէի թէ անցնելու լինէր: Մտածեց, մտածեց, տեսաւ որ զուր է չարչարփում. բայց տեսաւ որ ոչ ձի կար և ոչ թողած շորերը: Իշխանը սաստիկ բարկացաւ այս բանի վերայ. Նա կարծում էր, որ մի գող պէտք է տարած լինի ենակն ու շորերը և մտքում արդէն պատժի էր ենթարկում գողացողին: Բայց ցաւալի էր նորա դրութիւնը՝ խեղճը անսովոր, ոտարբորիկ ընկել էր դաշտով գնում, բարը ու աւազը կտրտում էին խեղճի ոտները, խոտը ծակում էր. երբէք իւր կեանքում այդպիսի օր կրած չէր: Այսպէս խեղճը գնաց բաւական տեղ, մօտեցաւ մի բլրի, բարձրացաւ վրան և տեսաւ, որ հովիւր այնտեղ տաւար է արածեցնում:

— Այ մարդ, — տսաց նա, — արի այստեղ: Հովիւր նայեց վրան և շատ զարմացաւ. «որ մտեղից զուրս եկաւ այս տկլոր մարդը», — մտա-

ծեց նա, առաւ մի ձեռքը մտրակ, միւսը՝ շուրին և կամաց կամաց մօտեցաւ նորան:

Ազեռուը որ նորան տեսաւ, ամպի պէս գոռաց վրան:

— Քան ես, ինչ է, այ մարդ, ինչու չես գալիս, երբ մարդ կանչում է:

— Իսկ գու ո՞վ ես — հարցնում է հովիւր: — Ի՞նչ ես կամենում:

— Ասա, ով է փախցրել իմ ձին ու շորերը:

— Ասա, գու ինքդ ով ես — դարձեալ հարցնում է հովիւր:

— Ինչպէս թէ ով եմ. անպիտան, չես տեսնում, որ ես ձեր իշխան Ազեռոն եմ:

Այս որ լսեց հովիւր, նայեց վերան ու ակամայ ծիծաղեց. «այ ցանցառ, ինչ ես զուրս տալիս. մեր իշխանը հէնց այս ըստէիս որսորդների հետ միասին վերադարձաւ բաղաք»:

— Այդ ինչ ասացիր, ինչպէս համարձակուցիր, անպիտան — գոռաց Ազեռուը:

— Կորիք, զնա, թէ չես կամենում մտրակիս համը տեսնել:

Բարկութիւնից Ազեռուը չէր իմանում, ինչ անէր. նա մոռացաւ, որ տկլոր էր և ընկաւ հովիւր

վերայ: Բանեց թեիցը, կամեցաւ խփել, բայց հովիւը դուրս պրծաւ, Ազեռոսին զետնովը տուեց և մի բանի անգամ մարակի այժը փորձեց վերան:

—Այ քեզ խօսքերիդ համար. այժմ զնա, ուր կամենումիս:

Խեղա Ազեռով ծեծ կերած վեր կացաւ և կամաց հեռացաւ: Անցաւ մի փոքը, հովիւը խղճահարուեց: «զուր տեղը էս մարդուն ես ծեծեցի», —մտածեց նա. —«կարելի է խելագար է»:

Ազեռով բաւական անցել էր. յանկարծ լսեց որ մէկը կանչում է.

—Այ մարդ, յետ դարձիր:

Ազեռով յետ դարձաւ, տեսաւ՝ հովիւը մի ձեռքով մի բան բռնած, միւսով կանչում է նրան:

—Յետ դարձիր, այդպէս տկոր ուր ես գնում. այ քեզ այս տոպրակը, շապկի տեղ անց կացրն վերադ:

Ազեռով բարացել էր մնացել. ամօթից գետինն էր մտնում: Հովիւը հանեց գոտիից դանակը, երեք տեղ բաց արեց տոպրակի վերայ. մէկը՝ որ զլուխը անց կացնի միջից, իսկ միւս երկուսը ձեռների համար, և մօտենալով Ազեռոսին ասաց՝ տոպրակը

դատարկ է, պէտք չէ ինձ—միջի հացը հատել է. լու չէ, որ մարդ տկոր զնայ. առ, շապկի տեղ հագիր:

Սպեռոսը ոչինչ չառաց, հագաւ տոպրակը և ուղերուեց քաղաք: Ճանապարհին նու մտածում էր իւր թշուառութեան վերայ. որտեղից եկաւ այս օրը իմ զլիխն. երեխ, մի խարերայ հազել է իմ շորերը, նստել իմ ձին ու զնացել. «Ես, ես ցայց կըտամ անպիտանին, թէ ով եմ. կըհրամայեմ հրապարակաւ զլիսատեկ, հովուին էլ կըհասնի», — մտածում էր նա. բայց յանկարծ միտքն ընկաւ տոպրակը և ամօթից կարմրեց: Այսպէս, մտքերի հետ ընկած գնում էր Ազեռով, մինչև որ մութիւ ընկաւ: Ստիպուած խեղը պէտք է դաշտումը գիշերէր: Արտից առաւ մի խուրձ խոտ, զրեց զլիսատակը և քնեց մինչև առաւօտ: Ծէկը որ ընկաւ, վեր կացաւ Ազեռով ընից և շարունակեց իւր ճանապարհը: Ճանապարհին տեսաւ որ մի բազմութիւն իւրեանց սայլերով գնում է քաղաք: Մարդիկ որ տեսան նորան, մօտեցան և հարցըին, թէ ի՞նչ մարդ է, ուր է գնում և ի՞նչո՞ւ առպրակ է հազել: Ազեռով մտաբերեց կերած ծեծը և

սկսեց խաբել. ես, ասաց նա, այստեղացի չեմ:
ես ձեր քաղաքովը անցնում էլ, ճանապարհին
աւազակները ընկան վերաս, ծեծեցին, ջարդեցին,
ձիս, շորերս ու փողերս խլեցին, ինձ էլ այս
տոպրակը հագցը ին ու բաց թողին:

Մարդիկը խղճացին վերան, հաւաքեցին՝ որը
շապիկ, որը վարտիկ. մէկը տուեց նորան իւր մա-
շտած ոտնամանները, միւսը՝ հին արխալուզը,
երրորդը՝ գտակը. Ազեռու շնորհակալութիւն արեց,
հարցրեց նոցա անունը, որտեղ են ապրում և
ուղևորուեց քաղաք. այժմ նա մի փոքր ուրախ էր:
«Շուտով նեղ օրերս կանցնեն, — մտածեց
նա: — Զարգործին կը պատժեմ, ինձ օդնողներին
կը վարձարեմ»:

Այսպէս մտածելով նա մտաւ քաղաք, գնաց
ուղղակի վանքի հրապարակը. այստեղ էր նորա
պալատը: Կամեցաւ դարւագէքը մանել, բայց
պահապանները չճանաչեցին նորան և ներս չժո-
ղեցին. միտքն ընկաւ հոգուի ծեծը, դողը ընկաւ
սիրտը, թողեց հեռացաւ ու սկսեց մտածել, թէ
ինչ անէր: Ուղղակի տուն մտնել անկարելի էր՝
մինչև որ երթաս, հասնես խաբեբային, կը ծե-

ծեն, կը ջարդեն, բահան էլ կը ձգեն. ով զիտէ,
զուցէ սպանեն էլ: «Պէտք է սպասեմ», — ասում
էր նա: Գնաց բաղար, մտաւ բանուորների շարքը.
մի մարդ չնշին գնով վարձեց նորան աղիւս
կրելու մի շինութեան համար: Ծանր էր թւում
նորան աշխատանքը — ուսերը անսովորութիւնից
արիւնլուայ էին եղել, ինչն էլ ծեծուած ջար-
դուածի էր նմանում: Երեկոյեան, վարձը որ
ստացաւ, երեք մաս արաւ՝ մի մասը տուեց
հացի, միւսը պահեց գիշերելու համար, իսկ
երրորդը տուեց թղթի, որ նամակ գնէ կնկանը:
Մարդ ու կնիկ իրար մէջ մի գաղտնիքը ունէին,
բացի նոցանից այդ գաղտնիքը ոչ ոքի յայտնի
չէր. որպէսզի կնիկը հաւատայ մարդու խօսքերին,
մէջն էլ յիշեց այդ գաղտնիքը: Նամակը զրեց,
մօտեցաւ իւր պալատին, տեսաւ իւր կնկայ աղա-
խիններից մէկին, տուեց նորան, որ տայ կնկանը,
ինքն էլ զրան մօտ կանգնած սպասում էր պա-
տսախանին:

Կնիկը նամակը կարդաց ու շատ զարմացաւ.
նա բոլորովին հաւատ չընծայեց զրածին, որով-
հետեւ մարդը մօտը կանգնած էր: Երևի, մարդու

չէ կարողացել ծածկել մեր դադանիքը և մէկին
ասլու է, մտածեց նա: Նա վախենում էր ամուս-
նուց, նա զիտէր, որ ամուսինը եթէ իմանայ
նամակի մասին, իրան անշուշա կրպատժէ—եռ
նամակ զբողին վախեցնէ, հրամայեց նորան
բանել, բերել բակը և մի լաւ ծեծել: Ծառաները
կատարեցին հրամանը՝ ներս բերեցին Ագևոսին,
լաւ ծեծեցին և կիսակենդան բաց թողեցին:
Իեղձ Ագևոսը թողեց գնաց, մի կիրպ հասաւ
քարվանսարէն, որտեղ իջել էր. ամբողջ գիշեր
խեղճը տանջվում էր, մինչև որ լուսադէմին կա-
րողացաւ քնել. մարմինը ծեծից ցաւում էր, իսկ
սիրտը աւելի վատ՝ բարկութիւնն ու կատա-
ղութիւնն ուտում էին նորան:

Առաւօտը լուսացաւ: Քարվանսարայի տէրը
կնկայ հետ պատրաստուեցին ժամ գնալու: Կնիկը
դուքուած դուրս եկաւ դարւագից. իսկ մարդը
միաց բակում: Կնիկը սկսեց մարդուն ձայն տալ.
— Սըրի, — ասում էր նա, — թէ չէ իշխանը կ'եր-
թայ կըմտնի եկեղեցի, էլ չենք տեսնիլ:

Այս որ լսեց Ագևոսը՝ հարցրեց.
— Ո՞վ է ձեր իշխանը:

— Իսկ դու ով ես. երեխ, այստեղացի չես,
որ չես իմանում. մեր իշխանը Ագևոսն է. 12
տարի ափրում է նա ամբողջ քաղաքին և նահան-
դին: Շատ ահարկու է մեր իշխանը. անցեալ
օրը տեսայ թէ չէ, բիչ մնաց վախիցս սիրտս
դնար:

Ագևոսը չզիտէր, գնար եկեղեցի թէ չէ.
«Է՞հ, — ասաց նա մի վորք մտածելուց յետոյ, —
ինչ լինի, լինի, կ'երթամ», — ասաց ու գնաց,
մտաւ եկեղեցի և կանգնեց գաւթումը բաղմու-
թեան հետ, որտեղ պէտք է գար իշխանը:

Ահա տեսնում է նա՝ թիկնապահները սրե-
սով, աստիճանաւորները իւրեանց զարդարուն
շորերով գալիս են: Եւ իշխանը ամպհովանու տակ
գալիս է իշխանունու հետ միասին ոսկէթել շո-
րերով ու թանկագին քարերով շարած գօտիներով:
Ագևոսը նայեց իշխանի դէմքին և գողաց վախից՝
Աստուած բացեց նորա աչքերը: Նա տեսնում էր
այժմ, որ Աստուծոյ հրեշտակն է այդպէս
իշխանի կերպարանք ընդունել. վախից թողեց
եկեղեցին, թողեց, վախաւ քաղաքից դուրս...

* * *

Երկար վախչում էր նա, ինքն էլ չզիտէր,
թէ ուր է գնում: Եւ յանկարծ նա ընկաւ մի
իշտ անտառի խորքը. յոգնածութիւնից նա ըն-

կաւ խոտի վերայ ծառի տակ և Երկար ժամանակ պասպէս ուժաթափ, թուլացած ընկած մնաց. կարծես հողին թռած լինէր նորա մարմնից....

Կէս գիշերին նա արթնացաւ. նա այժմ մոռացել էր բոլոր պատճաճը. նա չգիտէր, ինչու ասաղերը ծառերի միջից նայում են նորան, ինչու գլխավերել ծառերը քամուց խշվառում են, ինչու է ցուրտ և ինչու անկողինը թողած տանը՝ այնտեղ խոնաւ խոտի վերայ է պառկել: Ակսեց անցեալը մատքերել—և սաստիկ լալ՝ միտքն ընկաւ իւր բոլոր կեանքը. նա հասկացաւ վերջապէս, որ Աստուած ոչ թէ նորա համար էր պատժել նորան, որ սա հրամայել էր սուրբ գրքի էջերը պատճել, ոչ. նա տեսաւ, որ Աստուած նորան պատժել էր նորա ամբողջ կեանքի համար: «Աստուծոյ բարկութիւնը շարժեցի, — մտածեց նա, — արդեօք կրտայ նա ինձ թողութիւն իմ մեղքերիս համար»: Երկար ժամանակ այս դրութեան մէջ պառկած լաց էր լինում և Աստծուց թողութիւն խնդրում: Աստուած լսեց նորա ձայնը և զօրութիւն պարգեց նորան:

Արդէն լուսացել էր: Ագմուը վեր կացաւ

տեղից և գնաց տեսնելու, թէ ի՞նչ կայ աշխարհումը:

* * *

Անցնում է 2 տարի: Ազեռսի կնիկը կարծում է, թէ մարդը իւր հետ միասին պալատումն է ապրում: — Միայն այժմ զարմանում է, ինչից է որ մարդը այժմ բարի է և հանդարտ, ոչ ոքին չէ գլխատում, ոչ ոքին չէ պատժում, չէ գնում այլ ևս որսի, այժմ միայն եկեղեցի է գնում, մարգկանց կրիւներն ու վէճերն է ըննում և հաշաեցնում իրար հետ: Շատ էլ սակաւ է տեսնում մարդուն, այն էլ ինչպէս՝ հեղութեամբ կընայի վերան, մի քաղցր խօսք կ'ասէ և կընեռանայ, կ'երթայ, կըփակուի սենեակում: Վերջապէս մի օր կնիկը չէ համբերում, զալիս է մօտը և ասում. «Տէր իմ, ասա ինձ, ինչ եմ արել քեզ, ինչու ինձանից քեզ հեռու ես պահում, ասա, որ ես էլ իմանամ»:

Հրեշտակը նայում է վերան և ժպտալով պատասխանում. — «Ոչինչ չես արել, սիրելիս, միայն ես Աստծուն խօսք եմ առել 3 տարի քեզ մտքիցս ձգեմ. ահա անցնում է երրորդ տա-

րին, շուտով կըսկսես ապրել դարձեալ քո մարդու հետո, — ասաց և դնաց փակուեց սենեակում: իւր կինը շատ լացեց և վերադարձաւ իւր սեն- խեղճ կինը շատ լացեց և վերադարձաւ իւր սեն- խեղճ:

Այսպէս նոքա ապրեցին շարունակ երեք տարի:

Մի շաբաթ էր մնում, որ երրորդ տարին լրանայ, երբ իշխանը հրամայում է ժողովիլ իւր մօտ դաւառի ամեն ծայրից բոլոր որբերին ու աղքաներին՝ կամենում էր նոցա հիւրասիրել և ընծաներ տալ: Զիւաւորներ գնացին ընկան քա- ղաքից քաղաք, գիւղից գիւղ հրաւիրուածներին կանչելու: Իշխանի բակը շուտով լցուեցին ամեն կանչելու: Իշխանի բակը շուտով լցուեցին ամեն կոյ- տեղից որբերն ու աղքատները, կաղերն ու կոյ- տեղից որբերն ու ծերերը: Եկողների ըերը, անդամալոյժներն ու ծերերը: Եկողների ըերը, այնքան շատ էր, որ տեղ չլինելու պատ- թիւը այնքան շատ էր, որ տեղ չլինելու պատ- թիւը մի քանիսը նոցանից տեղաւորուեցին վան- ձառով, մի քանիսը նոցանից տեղաւորուեցին վան- ձառով:

Իշխանը եկաւ մտաւ եկեղեցի. աղքատներն էլ հետը մտան, ինչքան որ եկեղեցին կարող էր տանել, իսկ մնացած ամբոխը կանգնեց եկեղեցու տանել, իսկ մնացած ամբոխը կանգնեց եկեղեցու տանել, իսկ մնացած ամբոխը կանգնեց եկեղեցու տանել:

Նակ հրապարակում բաց էին անում սեղանները և հացը զցում. դարսում էին խմորեղէն, արգա- նակ, միս և զինի. բոլոր որբերին տեղ եղաւ սեղանների շուջը:

Շուտով երեսցաւ իշխանը. Նա եկեղեցու գրանը կանգ առաւ, ձեռքով արաւ՝ բոլորը լսեցին:

— Եատ ուրախ եմ, բարի մարդիկ, — ասաց նա, — խնդրեմ, նստէք ձեր տեղերը և անուշ ա- րէք. և երբ կըվերջացնէք, ես դարձեալ կըդամ ձեզ մօտ: — Իշխանը գնաց պալատը: Հրաւիրուած- ները նստեցին սեղան. մի շաբք կոյրեր տեղա- ւորուեցին մի սեղանի շուրջը. նոքա 12 հոգի էին բացի իւրեանց զլիսաւորից: Սա նստեցը նոցա և սկսեց ծառայութիւն անել՝ արգանակը աման- ները ածեց, բաժանեց հացը, խմորեղէնը, կտրատեց միսը, գալաները տուեց նոցա: Կոյրերը վայելում էին, իսկ ինքը մէկից անցնում գալիս էր միւսի մօտ ծառայութիւն անում:

Ճաշը վերջանում էր. Իշխանը դարձաւ պալատից և անցաւ աղքատների շաբքը: Նա մէ- կին մի բան էր ասում, միւսին հարցնում, եր- րորդին միւթարում. իսկ նորա սպասաւորները

հանգերձներ և փող էին բաժանում ամենքին: Վերջապէս իշխանը մօտեցաւ վերջին սեղանին, որտեղ կոյրելն էին: Սոցա զիմաւորը (ման առաջապէս իշխանին տեսաւ, դողդողաց և սպըրդնեց, իշխանը մօտեցաւ նորան և հարցրեց.

— Դու էլ աղքամտ ես:

— Ո՞չ, վսեմափայլ իշխան, ես աղքամ չեմ,

ես աղքամների ծառան եմ:

— Լաւ ասացիր, այ մարդ. ինչպէս է ա-

նունդ:

— Ինձ Ալեքսիանոս են ասում, — ասաց նա գետնին նայելով:

Հրեշտակը նայեց նորա աչքերին, ժպտաց և ասաց.

— Ամեն սուտ սախ տեղ չի անցնիլ. Արի յետկիցս:

Թողնելով իւր կոյրելին, նոցա զիմաւորը դնաց իւր իշխանի հետ պալատ: Անցնում են նորա բազմութեան միջով և ահա ամենքը աշ-քերը դարձել են նոցա. կարծես, երկու եղբայր կունին նոքա, այնքան նման են միմեանց. եր-լինին նոքա, այնքան նման են միմեանց. եր-լինին էլ բարձրահասակ, ու մազերով, դէմքի

գծազրութիւնը բոլորովին մէկ է. միայն Ալեք-սիանոսի մազերը չալ են ընկել, դէմքն էլ արեկից ու քամուց թուխ է դարձել, մինչ զեռ իշխանի երեսը սպիտակ է և պարզ: Բազմութիւնը ճա-նապարհ տուեց, նոքա անցան պալատը: Հրեշ-տակը տարաւ նորան հեռաւոր սենեակներից մէկը և փակեց դուռը:

— Ես քեզ ճանաչեցի, Ագևոս, — ասաց նորան իշխանը, — բայց դու ինձ ճանաչմաւմ ես:

— Գիտեմ, Տէր, դու եկել ես Աւանուծոյ մօտից ինձ պատժելու: Մեղայ մեղերիս և ողջ անցեալ կեանքիս համար: Շատ լացեց Ագևոսը, աղի արտասուք թափելով: Իսկ Հրեշտակը կանգ-նած է նորա գիմաց՝ պայծառ դէմքով և ժպիտը երեսին: Բարձրացրեց Ագևոսը զլուխը, կտրեց լացը՝ երբէք այսպիսի ժպիտ նա չէր տեսել:

— Վերջացաւ քո պատիժը, — ասաց նորան Հրեշտակը, — առ իշխանական ծիրանիդ, սուրդ և զաւագնդ, իշխիր ժողովրդին իմաստութեամբ և հեղութեամբ. այսուհետև եղիր ժողովրդի եղ-բայրը:

— Զէ, Տէր իմ, չեմ կամենում ես ոչ սուր,

ոչ գաւազան, ոչ գտակ, ոչ էլ ծիրանի: Ես չեմ
կամենում թողնել իմ կոյքը ընկերներին, ես նոցա
համար և լոյս եմ, և կերակուր, և բարեկամ, և
եղբայր: Երեք տարի շարունակ ես աշխատում
եմ նոցա համար, սրտով և հոգւով ես կապ-
ռւած եմ նոցա հետ: Ներիր ինձ, թող դնամ
նոցա մօտ:

— Լաւ ես ասում, Ագեսո, — ասաց Հրեշ-
տակը, — դնա խաղաղութեամբ:

Վեր կացաւ Ալեքսիանոսը, գնաց կոյքերի
մօտ. ամբողջ կեսնքը աշխատեց նոցա համար,
շատ տարի նա այսպէս ապրեց մինչև իւր մահը:

Իսկ Հրեշտակը երեք օրից յետոյ թողեց
իշխանի մարմինը: Թաղեցին մարմինը: Շատ ցա-
ւեց ժողովուրդը իւր իշխանի մահուան վերայ, որ
սկզբում գոռող էր, իսկ վերջը հեղ ու խոնարհ:

Իսկ Հրեշտակը բարձրացաւ երկինք Ասու-
ծոյ մօտ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0318602

10.338